Հաստիքը՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ
(կրթական ծրագրերի պատասխանատու)

Պարտականություններ.

1. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, գնահատում
2. Վերականգնողական ոլորտի միջազգային կրթական ծրագրերի ուսումնասիրում և տեղայնացում
3. Մասնագիտական կրթական ծրագրերի իրագործում դասախոսությունների և գործնական ուսուցման տեսքով
4. Հեռավար կրթական ծրագրերի իրականացում ըստ անհրաժեշտության

Պահանջվող որակներ և հմտություններ.

- Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում (գիտական աստիճանը կդիտվի որպես առավելություն)
- Գիտելիքներ մարդու նորմալ անատոմիայից, ֆիզիոլոգիայից, պաթոլոգիաներից
- Տեսական գիտելիքներ վերականգնողական բժշկությունից
- Գործնական հմտություններ ֆիզիկական ռեաբիլիտացիայից
- Նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ վերականգնողական ոլորտում
- Կրթական ոլորտում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- Միջազգային հավաստագրումները և ծրագրերին մասնակցությունը կդիտվի որպես առավելություն
- Անձնային բարձր որակներ՝ անաչառություն, բարյացակամություն, միջանձնային հարաբերություններում նրբանկատություն
- Պատասխանատվության բարձր զգացում
- Կազմակերպչական հմտություններ
- Հաղորդակցական և թիմային աշխատանքի հմտություններ
- Գրավոր հաշվետվությունների կազմման հմտություններ
- Սուպերվայզինգի ներքո աշխատելու պատրաստակամություն
- Գրագետ և սահուն խոսք
- Օտար լեզուների իմացություն՝ (ռուսերեն, անգլերեն) նվազագույնը ազատ խոսակցական, մասնագիտական տերմինաբանության մակարդակի
- Թվային գիտելքիներ՝ համակարգչային բազային գիտելիքներ, սոցիալական ցանցերի հետ աշխատելու բազային հմտություններ

Աշխատանքային ծանրաբեռնվածություն՝ շաբաթական միջինում 6-10 ժամ, կարելի է համատեղել հիմնական աշխատանքի հետ:

Հետաքրքրված թեկնածուներն իրենց ինքնակենսագրականները (CV) կարող են ուղարկել armmassagefederation@gmail.com էլ.հասցեին՝ նամակի թեմայի դաշտում նշելով **"ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ/ REHABILITOLOGIST"**:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. միայն ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի փուլին: Համավարակի տարածման կանխարգելմամբ պայմանավորված՝ հարցազրույցը հնարավոր է՝ ընթանա առցանց տարբերակով: